Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

Քաղաքականության վերլուծության համառոտագիր

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ներդրման և զարգացման հեռանկարները հայկական քրեական դատավարությունում

Խնդիրը

Այն, որ պետական մեղադրանքը ապահովագրված չէ այս կամ այն չափով քաղաքական իշխանության ազդեցության տակ ընկնելու վտանգից, կարծում ենք, անհերքելի է: Միայն պետական մեղադրանքի ձևով մեղադրանքի կազմակերպումը, այլ կերպ՝ պետական մեղադրանքի մենիշխանությունը, իր հերթին հղի է այն վտանգով, որ քաղաքական իշխանության ազդեցության տարատեսակ գործոնները կարող են հանգեցնել քրեական հետապնդում չհարուցելուն, դրա դադարեցմանը, քրեական հետապնդման միակողմանիութանը, արդյունքում հանցագործություն կատարած անձինք կարող են հնարավորություն ստանալ խուսափելու պատասխանատվությունից: Այդպիսի վտանգներից զուրկ չէ նաև հայ իրականությունը: Այսպես, օրինակ, 2017թ. մայիսին Երևանի ավագանու ընտրություններում ներկայիս վարչապետ Ն. Փաշինյանի և նրա համախոհների կողմից, ովքեր մասնակցում էին այդ ընտրություններին, քննչական մարմիններին ներկայացվեցին փաստաթղթավորված տվյալներ կոնկրետ անձանց կողմից կաշառքի բաժանման և դրան օժանդակման մասին: Փաստի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում 2017թ. մայիսի 17-ին հարուցվեց քրեական գործ, որը, սակայն, ընդամենը մի քանի օր հետո մայիսի 25-ին կարճվեց՝ ենթադրյալ հանցանք կատարած անձանց արարքներում հանցակազմի բացակայության հիմքով (արդարացնող հիմքով – Ա.Ղ.):

Արդեն 2018թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած համաժողովրդական շարժման հետևանքով 2018թ. ազգային ժողովի կողմից Ն.Փաշինյանի վարչապետ ընտրվելուց ընդամենը 2 օր անց՝ 2018թ. մայիսի 10-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի կայացրած որոշմամբ դատարանը վարույթն իրականացնող մարմնին պարտադրել է վերացնել բողոքաբերի (Ն.Փաշինյանի – Ա.Ղ.) իրավունքների և ազատությունների խախտումները, որի արդյունքում միայն 2018թ. հունիսի 7-ին ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչության ավագ դատախազ Հ.Պետրոսյանի որոշմամբ քրեական գործով վարույթը կարճելու մասին ՀՔԾ ՀԿԳ ավագ քննիչի որոշումը վերացվեց: Արդյունքում 2019թ. փետրվարի 4-ին Երևանի ավագանու ընտրություններին կաշառք տալու և դրան օժանդակելու փաստով 11 անձի նկատմամբ կայացվեց մեղադրական դատավճիռ:

Նախորդ քաղաքական իշխանության պայմաններում անձինք չէին ենթարկվի քրեական պատասխանատվության՝ գործը կարճվելու պատճառով: Չլիներ քաղաքական իշխանության փոփոխությունը, թերևս չէր լինի նաև մեղադրական դատավճիռը և հանցագործները կմնային անպատիժ:

Սակայն քրեական դատավարության ոլորտում քաղաքական իշխանության տարատեսակ ազդեցությունները խիստ վտանգավոր են (եթե ոչ կործանարար) և դրանք զսպելու, չեզոքացնելու (իրավական միջոցներով չեզոքացնելու) ուղղությամբ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել՝ հաշվի առնելով նաև դրա համար ստեղծված բարենպաստ քաղաքական դրությունը: Իբրև այդպիսի «զսպող», «չեզոքացնող» միջոց կարող է հանդես գալ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը:

Մյուս կողմից՝ նշված ինստիուտը, պետական մեղադրանքի հետ տարատեսակ զուգակցումներով մեծ հնարավորություն կտա բարձրացնելու ընդհանրապես մեղադրանքի արդյունավետությունը՝ մեղադրանքի գործում պետական սահմանափակ ռեսուրսներից զատ օգտագործելով նաև հանրության միջոցները: Այսպիսի պայմաններում, երբ մեղադրանքի գործում թույլատրվի հանրության մասնակցությունը, այլ կերպ չեզոքացվի պետական մեղադրանքի մենիշխան դիրքը կբարձրանա նաև մեղադրանքի և ընդհանրապես քրեական արդարադատության հանդեպ հանրային վստահությունը: Հետևաբար ժողովրդական մեղադրանքի ինստիուտի ներդրումը լուծում է նաև այդ խնդիրները:

Հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքի տարատեսակի՝ ժողովրդական մեղադրանքի հայկական քրեական դատավարությունում ներդրման հնարավորությունը՝ այդպիսով իսկ փորձ անել ինչ-որ չափով «չեզոքացնել» պետական մեղադրանքի մենիշխանությունը և դրա հնարավոր վտանգները: Հայկական քրեական դատավարությունում ժողովրդական մեղադրանքի ներդրման հնարավորությունը գնահատելիս հետազոտության նպատակն է նաև վեր հանել ինստիտուտի ներդրման հնարավոր խոչընդոտները, վտանգները և միջոցներ առաջարկելով դրանց հնարավոր չեզոքացման ուղղությամբ, որոշել ինստիտուտի ներդման հնարավոր «չափը»:

Այս նպատակներին հասնելու համար հետազոտությունը կազմակերպվել է երեք հիմնական հետազոտական հարցերի շրջանակներում.

1. Ինչպիսի՞ն է ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի էությունը և դրա նշանակությունը:
2. Ի՞նչ կերպ է արտահայտվել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը պատմական և համեմատաիրավական հարթությունում:
3. Հնարավո՞ր է արդյոք, և ինչպե՞ս (ի՞նչ չափաբաժինով) ներդնել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը հայկական քրեական դատավարությունում

Արդյունքներ

- Հետազոտության արդյունքում մեր կողմից հստակորեն տարանջատվել են երկու միմյանց մոտ, բայց տարբեր ինստիտուտներ՝ մասնավոր և ժողովրդական մեղադրանքները:
- Փորձ է արվել բացահայտել ժողովրդական մեղադրանքի նշանակությունը, իր հերթին այն տեսնելով երկու հարթությունում՝ հասարակական-քաղաքական և իրավական-տեխնիկական:
- Դասակարգման տարատեսակ չափանիշներ հիմք ընդունելով փորձ է արվել առանձնացնել ժողովրդական մեղադրանքի տարատեսակներ՝

«անսահմանափակ», «սահմանափակ», «լիարժեք», «ոչ լիարժեք», «հիմնական», «լրացնող», «սուբսիդիար» ժողովրդական մեղադրանքի տարատեսակներ:

- Ուսումնասիրվել է ռոմանոգերմանական (Ֆրանսիա, Գերմանիա, Իսպանիա) և անգլոամերիկյան (Անգլիա, Ուելս, ԱՄՆ) քրեադատավարական համակարգին պատկանող երկրներում ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի արտահայտությունները, ժողովրդական մեղադրանքի սահմանափակումները, և այն երկրներում որտեղ այն բացակայում է(էր), դրա ներդրման փորձերը:
- Ուսումնասիրվել է Խորհրդային քրեադատավարական իրավունքում ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ծագումը, զարգացումն ու անկումը:

- Վերլուծվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի կարգավորումները և բացահայտվել դրանում ոչ պրոֆեսիոնալ մեղադրանքի կազմակերպումը:
- Սահմանադրության և օրենսդրության վերլուծության հիման վրա եզրահանգում է արվել, որ ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը չի կարող լինել հակասահմանադրական: Փորձ է արվել հիմնավորվել քրեական հետապնդման հարուցման գործառույթի դատախազի բացառիկ լիազորությունը չլինելու հանգամանքը:
- Գնահատվել են ինստիտուտի ներդրման հնարավոր վտանգները, փորձ է արվել մշակել մեղադրելու իրավունքի չարաշահումը զսպող մեխանիզմներ:
- Առաջարկվել է ներդնել ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը, որոշակի սահմանափակ շրջանակով: Այդ ուղղությամբ մշակվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու նախագիծ:

Առաջարկություններ

Ժողովրդական մեղադրանքի ինստիտուտի ներդրման նպատակով նախ անհրաժեշտ է ինստիտուտի գիտական ճանաչելիության բարձրացմանն ուղղված քայլեր կատարել՝

- Հրապարակել հոդվածներ
- Մենագրություններ

- Կազմակերպել գիտական կոնֆերանսներ՝ քրեական մեղադրանքին մասնավոր անձանց մասնակցության հարցերով:

Անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում կատարել լրացումներ, որոնցով հնարավոր կլինի հայկական քրեական դատավարություն «ներմուծել» ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը: Այս առումով առաջարկվում է

- Լրացումներ կատարել քրեական դատավարության օրենսգրքում նախատեսելով՝ «լրացնող» ժողովրդական մեղադրանքի հնարավորություն:
- Հստակորեն սահմանել «ժողովրդական մեղադրող» սուբյեկտի կարգավիճակը, վերջինիս իրավունքներն ու պարտականությունները:
- Որոշել կոնկրետ այն գործերի շրջանակը, որոնցով թույլատրվելու է ժողովրդական մեղադրողին հանդես գալ:
- Ժողովրդական մեղադրողի իրավունքների հնարավոր չարաշահումներից խուսափելու նպատակով ներդնել «սահմանափակ»՝ կազմակերպությունների կողմից իրականցվող ժողովրդական մեղադրանք՝ օրենսդրորեն ամրագրելով, որ իբրև ժողովրդական մեղադրող կարող են հանդես գալ միայն այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն տասը տարվա իրավապաշտպան գործունեության ստաժ:
- Ժողովրդական մեղադրողի իրավունքի հնարավոր չարաշահման դեպքերում սահմանել վարույթի հանրային մասնակիցների կողմից դատարան դիմելու կառուցակարգ՝ ժողովրդական մեղադրողի կարգավիճակը դադարեցնելու համար:

Սույն քաղաքականության համառոտագիրը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում: Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի

դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Հեղինակ՝
Արտակ Ղազարյան (իրավաբան) Էլ.փոստ՝
artakghaz@gmail.com